



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 04/20

19.03.2020թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավոր Արթուր Ավագյանը (այսուհետ՝ Դիմող) թիվ ՎԴ/1638/05/19 վարչական գործի շրջանակներում դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի «հայցվող բարենպաստ վարչական ակտի, ինչպես նաև հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում ... դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա» դրույթի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասին:

Ըստ Դիմողի՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն կամ դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, եթե ունի այլ պետության քաղաքացիություն:

Նույն հոդվածի 2-րդ պարբերության 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժվում է, եթե նա ունի պետության հանդեպ չկատարված պարտավորություններ:

Մինչև 16.12.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական հաշվառումը նախագորակոչիկների

(16-18 տարեկան), գորակոչիկների (18-27 տարեկան) և պահեստագործում գտնվող քաղաքացիների հաշվառման ու հանրապետության գորակոչային, վարժահավաքային և գորահավաքային ռեսուրսների վերլուծության պետական համակարգն է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախագորակոչիկների զինվորական հաշվառումը համարվում է կցագրում: Կցագրման ենթակա են 16 տարին լրացած արական սեռի քաղաքացիները:

09.04.2018 թվականից ուժի մեջ մտած «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն օրենքով սահմանված կարգով մասնակցում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը՝ զինվորական հաշվառման, պարտադիր զինվորական ծառայության գորակոչի, պահեստագործային պատրաստության միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները պարտավոր են օրենքով սահմանված կարգով՝ կանգնել զինվորական հաշվառման, գորակոչվել պարտադիր զինվորական ծառայության, մասնակցել կազմակերպվող վարժական հավաքներին և զինվորական վարժանքներին:

Նույն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինվորական հաշվառման ենթակա են տվյալ տարվա ընթացքում 16 տարին լրացող արական սեռի քաղաքացիները:

Նշված գործի շրջանակներում Դատարանն արձանագրել է, որ նշված գործով կիրառման ենթակա նորմերի վերլուծությունը և սույն գործի փաստերի համադրումը հանգեցնում է նրան, որ հայցվոր Տիգրան Գևորգյանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետին դիմում ներկայացնելու պահի դրությամբ տվյալ պահին գործող «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի հիմքով չի հանդիսացել զինվորական հաշվառման ենթակա նախագորակոչիկ, քանի որ նշված նորմերով նախագորակոչիկներ էին հանդիսանում 16-18 տարեկան, առնվազն 16 տարի լրացած արական սեռի քաղաքացիները, մինչդեռ Տիգրան Գևորգյանի 16 տարին 29.03.2018 թվականին դեռևս լրացած չէր: Այսինքն՝ տվյալ պահին գործող «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով Տիգրան Գևորգյանը չէր հանդիսանում զինվորական հաշվառման կանգնելու պարտավորություն ունեցող քաղաքացի:

Մինչդեռ նշված գործի քննության ժամանակ գործող «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Տիգրան Գևորգյանը հանդիսանում է զինվորական

հավառման ենթակա քաղաքացի և նույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի 1-ին կետի հիմքով զինվորական հաշվառման կանգնելու պարտավորություն ունեցող, քանի որ նշված իրավակարգավորումներով Տիգրան Գևորգյանը հանդիսանում է տվյալ տարվա ընթացքում 16 տարին լրացող քաղաքացի:

Տվյալ դեպքում, հայցվորի կողմից ներկայացված հայցը հանդիսանում է պարտավորցեման հայց, որի նկատմամբ կիրառելի են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումները, ինչից էլ հետևում է, որ Հայցվորի կողմից հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը պետք է որոշվի դատական ակտի կայացման պահին գործող օրենքի հիման վրա: Մինչև սույն գործի քննության ժամանակ գործող իրավական ակտերը Հայցվորի համար հանդիսանում են իրավական վիճակը վատթարացնող:

Դատարանի գնահատմամբ օրենքի հետադարձ ուժի արգելքը տարածվում է ոչ միայն պատասխանատվություն սահմանող օրենքների, այլ նաև ընդհանրապես որևէ կերպ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների վրա, ինչը ենթադրում է, որ նշված սահմանադրական դրույթում ամրագրված արգելքը վերաբերում է ոչ միայն նյութական իրավական նորմերին, այլ նաև վարույթային իրավունքի նորմերին: Նույն մեկնաբանությունների համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքի հանդեպ հարգանքը:

Տվյալ դեպքում ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածի լույսի ներքո դիտարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Դատարանը գտնում է, որ այն համահունչ չէ նշված սահմանադրական նորմով սահմանված՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնին: Մասնավորապես, վիճարկվող նորմը, ի խախտումն ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածի, հաշվի չի առնում այն հանգամանքը, որ օրենսդրի կողմից մինչև վճռի կայացման պահը կարող են ընդունվել անձի վիճակը վատթարացնող նորմեր այն պահի համեմատությամբ, երբ անձը դիմել է վարչական մարմնին՝ հայցելով բարենպաստ վարչական ակտ:

Հատականշական է, որ նույն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ

ակտի ընդունման դրությամբ գործող օրենքների հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում ընդունվել է դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերող՝ նրանց համար ավելի բարենպաստ օրենք, և եթե դա նախատեսված է այդ օրենքով: Այսինքն՝ վիճարկման հայցի դեպքում օրենսդիրը կարգավորումը սահմանել է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածին համահունչ, մինչդեռ պարտավորեցման և գործողության կատարման հայցերի դեպքում նման կարգավորումը չի բխում ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածից և չի ապահովում անձանց լեգիտիմ ակնկալիքները:

Տվյալ դեպքում վճիռը կայացնելու պահին գործող՝ փոփոխված օրենսդրական կարգավորումները վատթարացնում են հայցվորի իրավական վիճակն այն պահի համեմատությամբ, երբ վերջինս դիմել է վարչական մարմնին, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորմամբ վեճը լուծելու դեպքում դատարանը ստիպված է լինելու կիրառել անձի համար վատթարացնող օրենքը:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ նշված գործով վեճի լուծման համար կիրառելի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի «հայցվող բարենպաստ վարչական ակտի, ինչպես նաև հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում է ... դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա» դրույթը հակասում է ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *հայցվող բարենպաստ վարչական ակտի, ինչպես նաև հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:*

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:*

Հարկ է նկատել, որ վիճարկվող իրավակարգավորումն ըստ էության վերաբերում է պարտավորեցման հայցի դեպքում կիրառելի իրավունքի խնդրին: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի (Պարտավորեցման հայց) 1-ին մասի համաձայն՝

1. Պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը:

Վիճարկվող իրավակարգավորումը վերաբերում է պարտավորեցման հայցի դեպքում կիրառելի իրավունքի խնդրին այնքանով, որքանով այն պահանջում է հայցվող բարենպաստ վարչական ակտի, հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշել դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

Այլ կերպ ասած, հակառակ սահմանադրական կարգավորման (ՀՀ Սահմ., 73-րդ հոդված), որը սահմանում է, որ **անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները հետադարձ ուժ չունեն**, վիճարկվող իրավակարգավորումը սահմանում է վարչական դատարանի պարտականությունը պարտավորեցման հայցի դեպքում հայցվող բարենպաստ վարչական ակտի, հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշել բացառապես դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա՝ անկախ նրանից, թե այդ օրենքներն անձի իրավական վիճակը վատթարացնող են, թե՛ ոչ:

Ստացվում է, որ այն դեպքում, երբ հայցվող բարենպաստ վարչական ակտն ընդունելու, հայցվող գործողությունը կատարելու կամ դրանից ձեռնպահ մնալու պահին գործող օրենքներին հետագայում փոխարինել են անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներ, որոնք գործում են դատական ակտի կայացման պահին, ապա հայցվող բարենպաստ վարչական ակտ ընդունելուն, հայցվող գործողությունը կատարելուն կամ դրանից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու հայցերի դեպքում դատարանը պարտավոր է հետադարձ ուժ տալ դատական ակտը կայացնելու պահին գործող օրենքներին, չնայած որ դրանք անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներ են:

Նման իրավակարգավորումը, կարծում ենք, համահունչ չէ ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին, որն առանց որևէ բացառության արգելում է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներին հետադարձ ուժ տալը, այսինքն՝ դրանց կիրառումը մինչև դրանց ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-1437 որոշման մեջ նշում է՝ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000, ՍԴՈ-1061, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1224, ՍԴՈ-1326), անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սահմանադրաիրավական խնդրին, արտահայտել է իրավական դիրքորոշումներ, համաձայն որոնց՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը.

- պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկն է,

- իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու հարգանքը լեզիտիմ ակնկալիքների հանդեպ,

- ընդհանուր կանոն է, իսկ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից, ինչը բխում է մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից,

- իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք է, միաժամանակ, այդ սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա, ինչը կհակասեր նաև մի շարք միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին:

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ Եվրոպական միության շրջանակներում ձևավորված իրավակիրառ պրակտիկայում իրավական որոշակիությունն ու լեզիտիմ ակնկալիքների սկզբունքներն իրավունքի հետադարձ ուժի գնահատման չափանիշներ են և համարվում են Եվրոպական միության իրավունքի ընդհանուր սկզբունքներ:

2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՍԴՈ-1326 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը նշում է. «Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 2012թ. դեկտեմբերի 14-ի ՍԴՈ-1061 որոշման մեջ արձանագրել է. «Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով բազմիցս, ... արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող

օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը, կարևորելով, որ «... անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը, և որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը «... հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով:

ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ դիրքորոշումներից հետևում է, որ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա, և որոնք հաշվի առնելով էլ անձը դիմել է վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ընդունել հայցվող բարենպաստ վարչական ակտը, կատարել հայցվող գործությունը կամ ձեռնպահ մնալ այն կատարելուց՝ հիմք ընդունելով նախկին բարենպաստ իրավակարգավորումները:

Մինչդեռ վիճարկվող վարչադատավարական դրույթը սահմանում է վարչական դատարանի կողմից միայն դատական ակտի կայացման պահին գործող օրենքների կիրառման պահանջ, անկախ այն հանգամանքից, որ, ի տարբերություն իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքների, դատական ակտի կայացման պահին գործող օրենքներն անձի իրավական վիճակը վատթարացնող են, թե ոչ, այսինքն՝ անկախ նրանից, թե դրանք իրավահարաբերության ծագման պահին գործող իրավակարգավորումների համամետա սահմանափակում են անձի իրավունքներն ու ազատությունները, սահմանում են անձի իրավունքների և ազատությունների իրականացման առավել խիստ կարգ, սահմանում են որոշակի պատասխանատվություն, անձի վրա դնում են որոշակի պարտականություններ կամ այլ կերպ անձի համար առաջացնում են որոշակի բացասական ազդեցություն:

Վարչադատավարական նման իրավակարգավորումը, կարծում ենք, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին՝ սահմանելով սահմանադրական կարգավորումից չբխող այլ իրավակարգավորում՝ կապված պարտավորեցման հայցի դեպքում կիրառելի իրավունքի որոշման հետ: Այն, ըստ էության, շրջանցում է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժի արգելքի սահմանադրական սկզբունքը՝ սահմանելով սահմանադրությանը չհամապատասխանող իրավակարգավորում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասին խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան